

Ժողովուրդ

41
(2707)

22 մարտի չորեքշաբթի 2023
տպագրության ժԲ տարի

✉ ք. Երևան, Արվյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԵՐԿԱՐ ՄՊԱՍՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒ



ԶՊ-ն երկար փնտրություններից հետո վերջապես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի թեկնածու գտավ:

«Քաղաքացիական պայմանագիր» -ը ՄԻՊ թեկնածու է առաջադրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Անահիտ Մանասյանին, որը նաև դատախազ Աննա Վարդապետյանի մտերիմ ընկերուհին է:

Երեկ ՄԻՊ թեկնածուն խորհրդարանում ԶՊ-ականների հետ փակ հանդիպում է ունեցել:

ԶՊ-ի ու ՄԻՊ թեկնածուի հանդիպումը տեղի է մտնում մեկ ժամ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ փակ հանդիպման ժամանակ ԶՊ-ականներից միայն մի քանիսն են հարցեր ուղղել թեկնածուին, մյուսները լսողի դերում են ընդամենը եղել: Թեկնածուն տրիվիալ ճշմարտություններ է ասել, արագ ամփոփել հանդիպումը: Հավելենք, որ իշխանական ՄԻՊ թեկնածուն անակնկալ է եղել նաև ԶՊ-ական պատգամավորների համար: Միայն ֆրակցիայի ղեկավարն ու քարտուղարն են նախապես իմացել այդ մասին, մյուս պատգամավորները հանդիպումից քիչ առաջ են իմացել՝ ով է իրենց ՄԻՊ թեկնածուն, մի մասն էլ ընդհանրապես հանդիպման ժամանակ են «բացահայտել» թեկնածուին: ԶՊ խմբակցության ղեկավարության գաղտնապահությունը, սակայն, չստացված էր, քանի որ ArmLur.am-ը երեկ կեսօրին հրապարակեց, թե ով է ԶՊ-ի ՄԻՊ թեկնածուն, եւ թե ինչպես են նրա գոյությունը գաղտնի պահում հենց իշխանական պատգամավորներից: ԶՊ-ում կասկածում են, որ մեր ինֆորմացիայի աղբյուրը Արթուր Հովհաննիսյանն ու Հայկ Կոնջոբյանն են:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով ԶՊ-ի ներսում Արսեն Թորոսյանի հետ կապված կրքերը դեռ չեն հանդարտվում: ԶՊ-ականներից ոմանք այս օրերին տարբեր օղակներով Նիկոլ Փաշինյանի ականջին փորձում են տարբեր տեղեկություններ հասցնել Թորոսյանի մասով, որպեսզի ավելի լարեն Թորոսյան-Փաշինյան առանց այն էլ լարված հարաբերությունները: Այս առումով ակտիվ է, մասնավորապես, Անդրանիկ Քոչարյանը, որն իր մտերիմ Արփի Դավոյանի միջոցով (որը նաև ԶՊ վարչության անդամ է ու առավել հաճախ է հանդիպում Փաշինյանին) տեղեկություններ է պարբերաբար հասցնում Փաշինյանի ականջին: Այն, որ Թորոսյանի ու Քոչարյանի հարաբերությունները լարված են, սրա մասին բազմիցս գրել ենք: Ստացվում է՝ Քոչարյանն այսպիսով փորձում է նաև իր հաշիվները պարզել Թորոսյանի հետ: Փաշինյանն էլ չի շտապում կտրուկ քայլերի գնալ Թորոսյանի մասով, թիմակիցներին ասել է, որ սպասում է նախաքննության ավարտին:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության վերջին նիստում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսել է նաև իրավապահ մարմինների աշխատանքի եւ կոռուպցիոն բացահայտումների մասին, որոնք հենց իր թիմին են առնչվում: Մասնավորապես, մեր տեղեկություններով՝ նա, անդրադառնալով իրավապահ համակարգի կողմից Քովիդի ժամանակաշրջանին առնչվող բացահայտումներին եւ իշխանության ներսում պաշտոնյաների կողմից իրականացված կոռուպցիոն գործարքների արդյունքում ձերբակալություններին, հայտարարել է՝ ով ուզում է լինի, անգամ իր եղբայրը կամ մտերիմը, իր հետ ճանապարհ անցած հավատարիմ մարդ, թե քաղաքական թիմի հետ նոր համագործակցող անձ, կոռուպցիոն գործարքների մեջ հայտնվելիս չի ներվելու ու պատժվելու է նախկիններից ավելի խիստ: Այս խոսակցությունը մասնավորապես ծավալվել է Երևանի փոխքաղաքապետ, առողջապահության նախկին փոխնախարար Գեորգ Սիմոնյանի շուրջ կատարված բացահայտումներից հետո, որում շոշափվում է նաև ԶՊ խմբակցության պատգամավոր, նախկին նախարար Արսեն Թորոսյանի անունը: Ըստ էության, Փաշինյանն անուղղակի հասկացրել է, որ չի ների նաև Թորոսյանին: Ներկաները քարացած լսել են Փաշինյանին եւ չեն համարձակվել ոչինչ ասել:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահ համակարգում գտել են Պարեկային ծառայության պետի հավանական թեկնածուին եւ նրա հարցը կբարձրացնեն: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վերջինս նոր ձեւավորված Ներքին գործերի նախարարության Երևան քաղաքի ոստիկանության վարչության պետի տեղակալ Արթուր Խուրդիսյանն է: Իրավապահ համակարգում նրա թեկնածությունը կառաջարկեն. կհամաձայնի նա, թե ոչ, ցույց կտա ժամանակը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ Ներքին գործերի նախարարությունը՝ ի դեմս ոստիկանության, երկար ժամանակ Պարեկային ծառայության պետ չի կարողանում գտնել. փնտրում են համակարգից մեկին, որն ի վիճակի կլինի ծառայությունը վերահսկելու եւ կանոնակարգելու, իրական բարեփոխումներով առաջ տանելու: Նշենք, որ փետրվարի 16-ին ՆԳՆ պարեկային ծառայության ղեկավար Արթուր Ումրշատյանն ազատվել էր զբաղեցրած պաշտոնից: Նրան ազատեցին, երբ մի խումբ պարեկներ տեսական ժամանակ չէին կարողանում Հանրապետության հրապարակի մայթերին անկանոն եւ վտանգավոր պտույտներ անող «Համերին» կանգնեցնել. երբ հաջողվեց, վարորդին արդեն փախուստի էր դիմել: Երիտասարդը ձերբակալվեց որոշ ժամանակ անց ու կալանավորվեց: «Ժողովուրդ» օրաթերթը նախկինում մշտապես անդրադարձել է կադրային խնդիրներին. չկան փոխնախարարներ, պաշտոնները ամիսներով, տարիներով թափուր են:



ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՆՔ

ԱԴԻԲԵՋԱՆԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱԴՐԱՆՔ ԿԱ

Ադրբեջանի նախագահի վերջին «սղառնալից» հայտարարությունների, Հայաստանի ու Արցախի շուրջ սեղի ունեցող իրադարձությունների, ինչպես նաև Հայաստանի ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ ArmLur.am-ը գրուցել է ՔՊ խմբակցության ղազախմավոր Վաղարշակ Հալոբյանի հետ:



-Պարոն Հալոբյան, Ադրբեջանի նախագահին իր վերջին ելույթում հերթական սպառնալիքները հնչեցրեց Հայաստանի ու Արցախի հասցեին՝ հայտարարելով՝ եթե Հայաստանն ուզում է խաղաղ ապրել 29 000 քառակուսի կիլոմետրի վրա, պետք է Արցախը պաշտոնապես ճանաչի Ադրբեջանի կազմում: Ավելին՝ ասաց, որ սահմանագծման աշխատանքները պետք է կատարվեն բացառապես իրենց պայմաններով: Ինչպե՞ս կմեկնաբանեք սա, այս պայմաններում ինչպե՞ս եք պատկերացնում հետագա բանակցությունները:

-Դեմարկացիայի եւ դեղին գծի հետ կապված գործընթացը շատ կարեւոր է Հայաստանի համար: Մենք ինքներս չենք հարգում կամ պետք է լինենք, որ այդ գործընթացը շուտ իրականացվի, բայց դրանք պրոցեսներ են, որոնք միջնորդների միջոցով պետք է իրականացվեն, կողմերից ոչ մեկը չի կարող դոմինանտ պայմաններ թելադրել: Մենք առաջին անգամ չէ, որ ակնատես ենք լինում Ադրբեջանի նախագահի նմանատիպ հայտարարություններին, բայց պետք է առաջ շարժվենք մեր օրակարգով, փորձենք ողջ գործընթացում Հայաստանի շահը ներկայացնել:

-Նիկոլ Փաշինյանն իր վերջին ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ Հայաստանն օրերս Ադրբեջանից առաջարկներ է ստացել խաղաղության պայմանագրի նախագծի վերաբերյալ: Ծանոթ էք արդյոք նոր առաջարկներին, դրանցում կա՞ պարտադրանք Արցախի մասով, ինչպես Ալիեւն էր հայտարարել:

-Ադրբեջանի կողմից միշտ էլ պարտադրանք կա: Ադրբեջանը փորձում է մաքսիմումը քաշել այս գործընթացից, բայց պարտադրելով չէ. մենք ունենք մեր պատ-

կերացումները Արցախի վերաբերյալ: Մենք առաջին հերթին պատասխանատու ենք Արցախի ժողովրդի ու մեր ժողովրդի առաջ, իսկ Ադրբեջանի առաջարկներում միշտ կա միտում Արցախի ու Հայաստանի ժողովրդի շահը ստորադասելու մասով, պետք չէ կոնկրետ դետալային հիմնավորում ներկայացնել: Նրանք ողջ գործընթացը ներկայացնում են՝ առանց հաշվի առնելու մեր ու Արցախի ժողովրդի պատկերացումները:

-Ոստ Զեզ՝ խորհրդարանում ծավալվող դիսկուսիաները որքանով են համապատասխանում Հայաստանի ու Արցախի առջև ծառայած մարտահրավերներին:

-Բավական երկար ժամանակ է՝ այս գումարման խորհրդարանը գործում է: Ես ուզում եմ նշել, որ հենց սկզբից՝ արտերկրյա այցերի ժամանակ, որտեղ մեր պետական շահը պետք է ներկայացվեր, նրանք գործընկերային աշխատելու չեն դրսևորել: Եղել են բացառություններ, բայց ընդհանուր առմամբ գործընկերային հարաբերություններ չեն եղել:

-Պարոն Հալոբյան, մեծ աղմուկ են բարձրացրել ձեր թիմակցի՝ Արսեն Թորոսյանի՝ նախարար եղած ժամանակվա կոռուպցիոն բացահայտումները: Իր նախ-

կին տեղակալ Գեորգ Սիմոնյանը կալանավորվել է: Թորոսյանի հետ այս հարցը քննարկել էք՝ ինչպես ստացվեց, որ իր պաշտոնավարման ընթացքում չարաշահումներ եղան:

-Ես չեմ ուզի նման ձեռնարկներ, բայց մի անգամ արդեն խոսել եմ այս մասին, ասել եմ, որ պետք չէ խախտել Գեորգ Սիմոնյանի անմեղության կանխավարկածը, նույն ասել եմ Արսեն Թորոսյանի մասով: Իմ տեղեկություններով՝ Արսեն Թորոսյանը որեւէ կարգավիճակ չունի այս գործում, նա նույնիսկ չի հարցաքննվել, ավելի շատ մամուլի տարածած տեղեկությունների հիման վրա է այս աղմուկը բարձրացել:

-Խոսակցություններ կան, որ այդ իրադարձություններից հետո Արսեն Թորոսյանի հետ խմբակցության պատգամավորների հարաբերությունները լարվել են. այս մասին ի՞նչ կասեք:

-Նման խնդիր չկա: Անձամբ իմ մասով կարող եմ ասել, որ պրոցեսը որեւէ ձեռով չի ազդել իմ ու պարոն Թորոսյանի հարաբերությունների վրա:

Չրուցեց ԶՊԻՄՍԻՆԵ ՍՈՒՇԵՐՅԱՆԸ

ՆՎԵՐՆԵՐ Է ԲԱԺԱՆՈՒՄ

ՀՀ Ազգային ժողովը նվերներ է բաժանում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ազգային ժողովը 2 մլն 285 հազար դրամ է ծախսել հուշանվեր-տուփ ձեռք բերելու համար: Մեկ անձից ուղիղ գնման եղանակով սովորաբար, երեսպատված դեկորատիվ թղթով հայկական արտադրության շուկայի եւ բնական մետաքսե շարժեր է գնել ԱԺ-ն: Նշենք, որ պրեմիում տեսակի շուկայի մեկ տուփը 130 հազար դրամ արժե: Տեղեկացանք, որ այս բոլոր գնումները կատարվել են մեկ անձից գնման սկզբունքով: Նվեր տուփը 45 հատ ստանդարտ է եւ 2 հատ պրեմիում: Այն եղել է հայկական արտադրության մակարոններ շարժով:

ՎԱՐՍԱԳՆԻ ԿԵԳԾԻՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Սիսիանում քաղաքապետի ընտրությունների կազմակերպումը խայտառակ գործընթացով է ուղեկցվում: Վահագն Յուզվախյանն անկարող է վերահսկել եւ կազմակերպել արդար ընտրություններ: Մասնավորապես, 34 ընտրատարածքային ընտրական նոր հանձնաժողովը, որ ընտրակարգում է Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջանները, կանայականություններ է թույլ տվել: Ինչպես հայտնի է, 2023թ. մարտի 26-ին տեղի է ունենալու Սիսիան խոշորագույն համայնքի համամասնական ընտրակարգով (ավագանու) ընտրություններ:

Սիսիանի տարածաշրջանը բաղկացած է 41 տեղամասային ընտրական հանձնաժողովից: Յուրաքանչյուր հանձնաժողով բաղկացած է 8 անդամներից: Հանձնաժողովի 6 անդամներին նշանակում են Ազգային ժողովի 3 խմբակցությունները, իսկ 2 անդամին նշանակում են թիվ 34 տարածքային հանձնաժողովի անդամները:

Արդյունքում տեղի է ունեցել խայտառակություն. ԸԸՀ գործիսյան անդամների կողմից տեղամասային հանձնաժողովներում անդամներ են նշանակվել հիմնականում Գորիսի համայնքում բնակվող իրենց ընտանիքների ներկայացուցիչները, հարազատները եւ ընկերները: Երեսույթը մեծ դժգոհություն է աղմուկ է բարձրացրել Սիսիան համայնքի լիցենզիա ունեցող մի քանի տասնյակ քաղաքացիների մոտ, որոնք որոշել են չմասնակցել ընտրություններին եւ բոլորովին դրանք: Օրինակ՝ ԸԸՀ-ի անդամ Գորիս քաղաքի բնակիչ Մարինե Բակունցը տեղամասային հանձնաժողովներում անդամներ է նշանակել Գորիսի համայնքում բնակվող իր երկու տղաներին՝ Արմեն եւ Արտակ Մկրտչյաններին, աղջկան՝ Անի Մկրտչյանին, քրոջը՝ Կարինե Բակունցին, իր եւ իր ամուսնու բարեկամներ Կորյուն եւ Կարեն Դաջունցներին, Արամ եւ Դավիթ Բաբայաններին, Նարեկ Տոռոզյանին, Դոնարա Դիլանյանին եւ այլոց... Հանձնաժողովի նախագահ Արմեն Ստեփանյանը անդամներ է նշանակել Գորիսում բնակվող իր տղաներ Էրիկ եւ Գարիկ Ստեփանյաններին, իր կնոջ եւ մի քանի բարեկամների (ցանկության դեպքում ամբողջական ցանկը անձամբ կարող է ճշտել պարոն Վահագն Յուզվախյանը) Հանձնաժողովի Գորիսի համայնքի բնակիչ Անի Հայրապետյանը անդամներ է նշանակել Գորիս քաղաքում բնակվող իր հորը՝ Խաչատուր Հայրապետյանին, բարեկամներ Զրիստինե եւ Լիլյա Մաթետյաններին, Կարինե Մարտիրոսյանին, Անուշ Ծատրյանին եւ այլ «խիստ կարիքավոր» բարեկամների, նույն ձեռագիրն են կիրառել Նաե ՏԸՀ-ի մյուս անդամները: Փաստորեն, լիցենզիա ունեցող, բայց ծանոթներ չունեցող լիցենզավորված մասնագետները մասցել են պրոցեսից դուրս, ասել է թե՛ Սիսիան համայնքի ընտրություններում հանձնաժողովներում անդամներ են նշանակվել 50-ից ավելի Գորիսի համայնքի բնակիչներ: Սիսիանի ԿԸՀ նախագահ Վահագն Յուզվախյանի կազմակերպած առաջին ընտրությունը ծանոթով հանձնաժողովականներ:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

Երեւանի նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի գլխին սեւ ամոլեր են կուսակվում:

Հակակոռուպցիոն կոմիտեն անցել է գործի, եւ իրավապահները մեկը մյուսի հետեւից մեղադրանքներ են առաջարկում քաղաքապետարանի պաշտոնյաներին: Մասնավորապես, մեղադրանքներ են առաջարկվել ԶՊ անդամ, Երեւանի քաղաքապետարանի կարգավիճակ չունեցող գույքերի բաժնի պետ Տարոն Սիրոյանին, ձերբակալվել էին Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի նախկին ղեկավար Սեյրան Մեջլումյանը, որը 2 օր առաջ էր դիմում գրել եւ ազատվել աշխատանքից, եւ Ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչության պետի ԺՊ Դավիթ Դալաքյանը: Քաղաքապետարանում տիրող իրավիճակի, Հրաչյա Սարգսյանի շուրջ առկա իրավիճակի մասին «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս է գրել: Մասնավորապես, պետական մարմինների մոտ կասկածներ են հարուցել չինական «ժոնգ տոնգ» (Jhong Tong) ընկերության եւ Երեւանի քաղաքապետարանի միջեւ ավտորուսների ձեռք բերման ընթացքը: 2022թ.-ին քաղաքապետարանի կողմից հայտարարվել էր մրցույթ նույն ավտորուսների ձեռք



բերման համար, եւ հաղթել է չինական «ժոնգ տոնգ» (Jhong Tong)-ը: Որոշակի շրջանակներում կան տեղեկություններ, որ Սիացյալ Էվիրություններում բացված օֆշորային ընկերության հաշիների վրա «ժոնգ տոնգ»-ի կողմից կատարվել են «անհասկանալի» փոխանցումներ. դրանք ձեւակերպվել են որպես ծառայու-

թյունների մատուցում կամ նմանատիպ այլ գործարքներ: Խոսքը հարյուր հազարավոր դոլարների մասին է: Հի բացառվում, որ այս գործի շրջանակները էլի ընդլայնվեն՝ հասնելով միջեւ Հրաչյա Սարգսյան, որն անակնկալ (գուցե այս գործով պայմանավորված) իրաժարական տվեց:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԱԳՏՆԻ ԹԵԿՆԱԾՈՒ

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը վերջապես 33 մարդու իրավունքների պաշտպանի թեկնածու է գտնել, սակայն ԶԴ-ական պատգամավորներին չի ասվել գործադիրից, թե ով է թեկնածուն:

Մեզ հասած հավաստի տեղեկությունների համաձայն՝ իշխանության ՄԻՊ թեկնածուն 33 գլխավոր դատախազ ԱՆՍԱ Վարդապետյանի մտերիմ ընկերուհի, գլխավոր դատախազի տեղակալ Անահիտ Մանասյանն է:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հաշված թվով պատգամավորներ գիտեն, թե ով է թեկնածուն: Նա հենց Անահիտ Մանասյանն է:

ArmLur.am-ը դիմեց 33 գլխավոր դատախազություն՝ պարզելու լուրի իսկությունը, որտեղից ո՞չ հաստատեցին, ո՞չ էլ հերքեցին Մանասյանի՝ ՄԻՊ թեկնածուի լինելու մասին տեղեկությունը:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԵՔԵՐ Է ՄԱՔՐՈՒՄ

33 էկոնոմիկայի նախարարությունը որոշել է մաքրել նախարարության մասնաշենքերը: Այդ աշխատանքներն իրականացնելու համար նախարարությունը պայմանագիր է կնքել 792 եւ 563 հազար դրամ արժողությամբ՝ մեկ անձին գնման ընթացակարգով:

Մաքրման ենթակա է նախարարության շենքն ամբողջությամբ՝ աշխատասենյակներ, սանհանգույց, միջանցք:

Երկու պայմանագրերն էլ նույն բնույթի աշխատանքներ են ենթադրում. շենքերից մեկը 9 հարկանի է, մյուսները՝ 7 եւ 5:

ՆԱԽԱԳԻԾԸ ԶԸՆԴՈՒՆՎԵՑ

Երեկ գումարվեց Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանը, սակայն ԱԺ «Հայաստան» խմբակցության հեղինակած «Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ իրականացվող ռազմաքաղաքական ագրեսիայի, սահաբեկական ու սադրիչ քայլերի, Բերձորի (Լաչինի) միջանցքի փակման կապակցությամբ» անվամբ նախագիծը չընդգրկվեց օրակարգում, իսկ մինչ այդ էլ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը տվել էր բացասական եզրակացություն:

Հիմնական զեկուցող Անդրանիկ Թեւանյանը ներկայացրեց նախագիծը, որում, ի թիվս այլ դրույթների, խստորեն դատապարտվում են դեկտեմբերի 3-ին եւ 12-ին Ադրբեջանի կողմից բնապահպանական կեղծ պատրվակով Հայաստանն ու Արցախն իրար կապող Լաչինի միջանցքը փակելու սադրիչ քայլերը:

ԱԺ «Հայաստան» խմբակցության անունից ելույթ ունեցավ նաեւ խմբակցության քատուղար Արծվիկ Մինասյանը՝ նշելով, որ հայտարարության նպատակն է միջազգային հանրությանը եւ ամբողջ առաջադեմ հասարակայնությանը մղել, որպեսզի Ալիեյի ցեղասպան քաղաքականությունը կանխելու գործում համագործակցեն հայության հետ:

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը չմասնակցեց հարցի քվեարկությանը:

Նախագծին կողմ է քվեարկել 28 պատգամավոր:

ԱՄՆ դեսֆառսուդարությունը հրադարակել է մարդու իրավունքների մասին 2022 թվականի իր զեկույցը, ուր, ըստ դեսֆառսուդարի, ուսումնասիրել է 200 երկրներում առկա իրավիճակը, այդ թվում՝ Հայաստանում:

ԱՄՆ պետքարտուղարությունը մարդու իրավունքների մասին 2022 թվականի իր զեկույցում առանձնացրել է Հայաստանի՝ այս ոլորտի առավել նշանակալի խնդիրները, որոնք ներառում են, ըստ արժանահավատ հաղորդումների, «անվտանգության ուժերի անդամների կողմից խոշտանգումները, բանտային ծանր պայմանները, կամայական ձերբակալությունները կամ կալանավորումները, դատական անկախության հետ կապված լուրջ խնդիրները, անձնական կյանքին կամայական կամ անօրինական միջամտությունը, խոսքի ազատության սահմանափակումը, հանցագործությունները, որոնք ներառում են բռնություն կամ սպառնալիքներ՝ քաղաքացիական հասարակության գործիչների եւ ԼԳԲՏԵ համայնքի ներկայացուցիչների հանդեպ, ինչպես նաեւ երեխաների աշխատանքի վատթարագույն ձեւերի դրսեւորումները: Ձեկույցում անդրադարձ կա նաեւ հայ-ադրբեջանական հակամարտությանը, մասնավորապես նաեւ անցած տարվա բախումների ընթացքում զինծառայողների անօրինական մահապատժի վերաբերյալ հաղորդումներին: Ըստ զեկույցի՝ «սեպտեմբերի կեսերին ադրբեջանական եւ հայկական ուժերի միջեւ ինտենսիվ մարտերից հետո արժանահավատ հաղորդումներ եղան անօրինական մահապատժերի մասին, որոնք ներառում էին ադրբեջանական կալանքի տակ գտնվող հայ զինվորների մահապատժերը»: Ձեկույցը մատնանշում է Human Rights Watch-ը եւ Bellingdat լրագրողական հետաքննող խմբի հաղորդումները, որոնք պնդել են, որ տարածված տեսանկյունում պատկերված են առնվազն յոթ հայ զինվորներ, որոնք անօրինական մահապատժի են ենթարկվել ադրբեջանական զինվորական համազգեստով զինծառայողների կողմից: Մատնանշվում է նաեւ մեկ այլ տեսանկյուն, որը պատկերում է երեք հայ զինվորներին ռազմական դիրքի տարածքում ադրբեջանցի զինվորականների գերության ներքո: Հարդրվում է, որ երեքի մարմիններն ավելի ուշ վերադարձվել են Հայաստանին, եւ նրանց ինքնությունը հաստատվել է: Պետքարտուղարության զեկույցը գրում է, որ իրավապաշտպան կազմակերպությունները շարունակում են մտահոգություններ հայտնել հայկական բանակում ոչ մարտական գործողությունների հետեւանքով մահերի եւ իրավապահների կողմից այդ մահերի հետ կապված պատշաճ հետաքննություն չանցկացնելու վերաբերյալ: Իրավապաշտպան 34-ների կարծիքով՝ կառավարության թափանցիկության բացակայությունը զինվորականների մահվան դեպքերի շուրջ, անկախ դրանց մարտական կամ ոչ մարտական բնույթից, հանգեցրել է



հանրային անվտանգության այս ոլորտում պաշտոնական տեղեկատվության նկատմամբ:

Ձեկույցը շեշտում է, որ երկրում առկա է համակարգային կոռուպցիայի ժառանգություն բազմաթիվ ոլորտներում՝ ներառյալ շինարարության, հանքարդյունաբերության, պետական կառավարման, խորհրդարանի, դատական համակարգի, գնումների ու պետական աջակցության տրամադրման: Մեղադրանքներ են հնչեցվել նաեւ պետական պաշտոնյաների ներգրավմամբ պետական միջոցների յուրացման եւ կասկածելի բիզնես գործունեության մասին:

Ըստ զեկույցի՝ Հայաստանում չեն արձանագրվել քաղաքական բանտարկյալների առկայության մասին արժանահավատ հաղորդումներ, սակայն առկա են հաղորդումներ, որ անվտանգության ուժերի ներկայացուցիչներն արգելանքի տակ գտնվող անձանց շարունակել են ենթարկել խոշտանգումների կամ թույլ են տվել այլ ոտնձգություններ: Դրանց թվում զեկույցն առանձնացնում է ոստիկանական բաժանմունքներում շարունակական խոշտանգումների մասին հաղորդումները, որոնք, ի տարբերություն բանտերի եւ ոստիկանության կալանավայրերի, ենթակա չեն հանրային մոնիտորինգի: Ձեկույցն անդրադառնում է նաեւ Հայաստանում խտրականության խնդրին, մասնավորապես՝ սեռի, սեռական կողմնորոշման, սահմանափակ առողջական կարողությունների հիման վրա: Ձեկույցի գնահատականով՝ խտրականության ուժեղ օրենսդրությունը կատարյալ չէ եւ չի պաշտպանում խոցելի խմբերին՝ անդրադառնալով վերջիններիս կյանքի բոլոր ասպեկտների վրա, այդ թվում՝ աշխատանքի, բնակարանի, ընտանեկան հարաբերությունների, կրթության եւ առողջապահության հասանելիության վրա, իսկ սահմանափակ առողջական կարողություն ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը շարունակում է մնալ համատարած խնդիր: Վերջիններս այլոց հետ հավասար չունեն կրթական, առողջապահական, հասարակական այլ մասնաշենքերից եւ տրանսպորտից օգտվելու հնարավորություն: Բացի այդ, ըստ զեկույցի, կանայք, ի տարբեր

ություն տղամարդկանց, հիմնականում չունեն նույն մասնագիտական հնարավորությունները կամ վարձատրությունը: Գործատուները հաճախ նրանց տեղափոխում են ավելի ցածր վարձատրությամբ աշխատանքի: Ձեկույցը նշում է, որ աշխատանքային օրենսգիրքը բացահայտորեն չի պահանջում հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության ապահովում:

Ձեկույցի պնդմամբ՝ հանրային շրջանակներում առկա է կարծիք, որ աշխատավայրերում եւ քաղաքական ասպարեզում կանանց նկատմամբ սեռական ոտնձգությունները լայնորեն տարածված են, ու այս խնդիրը համարժեք կերպով արձագանք չի ստանում կառավարության կողմից: Խոսելով մարդու իրավունքների այս տարվա զեկույցի մասին՝ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը շեշտում է՝ փաստաթուղթը իր ցույց է դնում, որ 2022 թվականին բոլոր տարածաշրջանի երկրներում մենք շարունակում ենք ակնատես լինել մարդու իրավունքների հետընթացին՝ ներառյալ քաղաքացիական ակտիվության սահմանափակման, մարդու հիմնարար արժանապատվության հանդեպ անհարգալից վերաբերմունքին: Նրա խոսքով՝ զեկույցը փաստացի, օբյեկտիվ է խորապես ներկայացնում է մարդու իրավունքների հետ կապված իրավիճակն ամբողջ աշխարհում՝ ուսումնասիրելով մոտ 200 երկրներում եւ տարածքներում այս ոլորտի հետ կապված զարգացումները: Պետքարտուղարն ընդգծում է՝ այն կիրառում է նույն չափանիշները բոլորի հանդեպ՝ ինչպես ԱՄՆ դաշնակիցների եւ գործընկերների, այնպես էլ այն երկրների հանդեպ, որոնց հետ Վաշինգտոնն ունի տարածայնություններ: Նրա նպատակը խրատելը կամ անարգելը չէ, ասել է պետքարտուղարը՝ շեշտելով, որ այն ավելի շուտ համապատասխան գործիքակազմ է նրանց համար, ովքեր պայքարում են մարդու իրավունքների խախտումների դեմ: Չնայած այս զեկույցը ուսումնասիրում է աշխարհի տարբեր երկրներում առկա իրավիճակը, մենք գիտենք, որ Միացյալ Նահանգները եւս բախվում է մարդու իրավունքների հետ կապված իր մարտահրավերներին: Նշել է ԱՄՆ պետքարտուղարը զեկույցի մասին իր ելույթում:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԺԱՄԱՆԵԼ Է ԵՐԵՎԱՆ

Իրանի արտաքին գործերի փոխնախարար Ալի Բաղերի Քանին երկօրյա աշխատանքային այցով ժամանելու է Հայաստան:

«Նոր տարվա մեկնարկից մի քանի ժամ անց դիվանագիտական համակարգի աշխատանքը կենտրոնանում է հարեւանության քաղաքականության ամրապնդման

եւ Կովկասյան տարածաշրջանի առաջնահերթության վրա: Իմ հայ գործընկերոջ հրավերով՝ երկօրյա աշխատանքային այցով մեկնում եմ Երեւան», - գրել է նա:

ՀՀ ԴԵՄՊԱՆ՝ ԲԻԱԶԻԼԻԱՅՈՒՄ

33 նախագահ Վահագն Խաչատուրյանը հրամանագիր է ստորագրել «Հիմք ըն-

դունելով վարչապետի առաջարկությունը, համաձայն Սահմանադրության 132-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաեւ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 14-րդ հոդվածի 1-ին մասին՝ Արմեն Եգանյանին նշանակել Բրազիլիայի Դաշնային Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Բրազիլիա)»:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

200 ԱՌԱՆՉՆԱՏՈՒՆ ՎԹԱՐԱՅԻՆ ԵՆ

Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում, Դիլիջան համայնքի Գոշ, Յարաթին, Յուլյա գյուղերում, Իջեան համայնքի Աջաջուր, Գետահովիտ գյուղերում, Նոյեմբերյան քաղաքում, Նոյեմբերյան համայնքի Կողբ գյուղում եւ այլ բնակավայրերում առկա են սողանքի օջախներ: Տարիներ առաջ ճապոնական «Ջայկա» կազմակերպությունը Տավուշի մարզի սողանքային ակտիվ գոտիներում հորատանցքեր է փորել եւ սողանքի գոտու ջրահեռացումից հետո այդ տեղերում տեղադրել ջրի մակարդակի բարձրացումն արձանագրող ավտոմատ սարքեր: Դիլիջան քաղաքի կենտրոնում առկա սողանքի հարցը մի քանի տարի առաջ լուծվեց դեռես խորհրդային ժամանակ փորված, ջրահեռացման համար նախատեսված թունելները մաքրելու, դրանք վերագործարկելու շնորհիվ: Իջեան քաղաքին կից գտնվող, Իջեան համայնքի Այգեհովիտ գյուղում կա սողանքի հետեւանքով վթարայնության տարբեր աստիճաններ ունեցող շուրջ 90 տուն: 1997-1998 թվականներին դրանցից 7-ին պետական բյուջեից դրամական աջակցություն է ցուցաբերվել, վերջիններս նոր տեղում տուն են կառուցել կամ գնել: 2012 թվականին սողանքից տուժած գետահովիտի մի ընտանիքի պետական բյուջեից 5 միլիոն դրամի ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել: Պետական բյուջեից դրամական աջակցության շնորհիվ տարիներ առաջ լուծվել է Դիլիջան համայնքի Գոշ եւ Յարաթին գյուղերի սողանքից վթարային թաղամասերի բնակիչներին տնով ապահովելու խնդիրը: Տավուշի մարզում սողանքի խնդիրը դեռես լուծված չէ: Ի պատասխան լրագրողի տեղեկատվական հարցման՝ Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ Տավուշի մարզի 19 բնակավայրերում հաշվառված է սողանքի պատճառով վթարված 200 առանձնատուն, որոնք ունեն վթարայնության 4-րդ աստիճան:

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆ ԱՆՏԵՂՅԱԿ Է

2020 թվականի մարտին հիմնված «Եվրոասֆալտ» ՓԲԸ-ն, որի գլխավոր տնօրենը Աժ Նախագահ Ալեն Սիմոնյանի եղբայր Կարեն Սիմոնյանն է, 2022 թվականին պետական բյուջեի գրեթե 1 միլիարդ դրամ ֆինանսավորմամբ Դիլիջան քաղաքում իրականացրել է վերանորոգման աշխատանքներ Յայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի 5-կիլոմետրանոց հատվածում: Նախատեսված էր, որ այդ աշխատանքները կավարտվեն 2022 թվականի դեկտեմբերի վերջին, սակայն աշխատանքները կհաստ են մնացել, այդ հատվածում գտնվող կամրջի նորոգումն անավարտ է, ճանապարհի առանձին հատվածներում ասֆալտապատումն ավարտված չէ, ճանապարհի եզրաքարերը տեղադրված չեն: Տավուշի մարզպետ Յայկ Ղալումյանին գրավոր հարցում են ուղարկել, թե երբ է ավարտվելու այդ ճանապարհահատվածի նորոգումը: Տավուշի մարզպետարանից գրավոր պատասխանել են. «Տվյալ ճանապարհահատվածի պատվիրատուն ՀՀ ՏԿԵՆ ճանապարհային դեպարտամենտն է: Տավուշի մարզպետարանը հարցադրման վերաբերյալ համապատասխան տեղեկատվության չի տիրապետում»:
ՈՍՎԻՆ ՄԱՐԶԱՅԻՆ Տավուշ

ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՆ ՊԵՏՔ

ԵՎՐԱՄԽՈՐՀՐԴԱՐԱՆԵԸ ՆՈՐ ԲԱՆԱՁԵՎ Է ԸՆԴՈՒՆԵԼ

ArmLur.am-ի գրուցակիցն է Եվրոպական խորհրդարանում Հայաստանի հարցերով մեծակամ գեկուցող Անդրեյ Կովաչենք:

-Պարոն Կովաչեն, արդեն 100 օր է՝ շարունակում է փակ մնալ Արցախը Յայաստանին եւ աշխարհին կապող միակ ճանապարհը: Ի՞նչ եք մտածում ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

-Բացարձակապես անընդունելի է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքը փակելը: Այն ի հակառակ է 2020 թվականի եռակողմ հայտարարության, եւ այս իրավիճակը պետք է հնարավորինս արագ կարգավորվի: Ադրբեջանը պետք է հետեւի Միջազգային դատարանի է այդ տարվա փետրվարի վճռին՝ երկու ուղղություններով երաշխավորելու մարդկանց, բեռների եւ բոլոր տեսակի իրերի ազատ անցումը, որն անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղում հայերի կյանքի համար: Սա անընդունելի է, եւ սա նաեւ ամբողջված է Եվրախորհրդարանում ընդունված մեր բանաձեւում, որով Ադրբեջանին խնդրում ենք անհապաղ վերականգնել Լաչինի միջանցքի ազատ անցումը: Մենք դիտարկում ենք խնդիրը Եվրախորհրդարանում մեծ մտահոգությամբ, եւ սա շատ պարզ է, ուստի ծայրերի մեծամասությամբ է ընդունվել բանաձեւը:

-Բայց մենք տեսնում ենք, որ Ադրբեջանը շարունակում է փակ պահել միջանցքը: Ըստ Ձեզ՝ ո՞րն է պատճառը, որ Ադրբեջանը չի լսում միջազգային հանրությանը:

-Մենք շարունակելու ենք մեր քայլերն այդ նպատակին հասնելու համար: Մի քանի համաձայնություններ ու հայտարարություններ կան, սակայն մենք ունենք շատ հստակ իրավիճակ, երբ Ադրբեջանն իսկապես չի հետեւում պայմանավորվածությանը: Միջազգային հանրությունը պետք է շարունակի հարաբերությունների կարգավորման հետ կապված ջանքերը, Եվրախորհրդարանը



պահանջեց հեռացնել ադրբեջանական բոլոր զորքերը Յայաստանի տարածքից եւ հասնել կայուն խաղաղության պայմանագրի, սահմանազատել եւ սահմանազատել Յայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանը: Սա պետք է արվի Լաչինի միջանցքը բացելու համար: Սրանք այն ամբողջ տարրերն են, որոնք շատ կարեւոր են Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի եւ վստահության ամրապնդման միջոցների հասնելու համար: Առանց միջանցքի ազատ անցման երաշխիքի, շատ դժվար է վերականգնել վստահությունը երկուսի միջեւ: Բացի այդ, սա է պատճառը, որ մենք ողջունում ենք Եվրոպական միության մեր նոր առաքելության ստեղծումը:
-Սակայն այս իրավիճակում, երբ խոսվում է սահմանում լարված իրավիճակի մասին, նաեւ խաղաղության պայմանագրի մասին է խոսվում: Դա հնարավոր համարում եք:

-Եվրախորհրդարանի՝ մեր կողմից ընդունված բանաձեւում պահանջվում է, որ ատելության խոսքն ու սադրանքները պետք է դադարեցվեն, եւ Ադրբեջանի դեկլարությունը, նաեւ նախագահ Ալիեյը խուսափեն ցանկացած հայտարարություններից, որոնք կարող են խորացնել ճգնաժամը եւ էլ ավելի սուղեր առաջացնել երկու ժողովուրդների միջեւ: Ես շատ եմ տխրում ամեն անգամ, երբ տեսնում եմ նման հայտարարություններ, որոնք հակասում են հարաբերությունների կարգավորմանը, քանի որ Յայաստանի, բայց նաեւ Ադրբեջանի նոր երիտասարդ սերունդը կարիք ունի խաղաղ ապրելու, հեռանկարների, կարիերայի զարգացման: Պետք է ունենալ խաղաղության պայմանագիր եւ կայուն խաղաղության պայմանագիր, որը հիմնված է վստահության վրա: Բայց դրան հասնելու համար, իսկապես, Ադրբեջանին այժմ անհրաժեշտ են միջանցքի ազատ անցումը երաշխավորելու քայլերը:
Ջրուցեց ՆԱԻՐԱ ՅՈՎԿՅԱՆՆԻՍՅԱՆԸ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՎԵԼ Է ԲԵՌՆԱՓՈԽԱԳՐՈՒՄՆԵՐԻ ՈՒՈՐՑԸ

Մրցակցության դաշտում 2022 թվականին հինգ առանցքային ռուկաների արժույթն ուսումնասիրել է բեռնափոխադրման ծառայությունների մատուցման ոլորտը: Ուսումնասիրությունն իրականացվել է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի կողմից իրականացվող «Մրցակցություն՝ Մրցակցության դաշտում 2022 թվականին հանձնաժողովին» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿԵՐՊՅԱՆ ԾՐԱԳԻ ԵՐՋԱՆԱԿՈՒՄ «Լեւո» խորհրդակցական ընկերության հետ համատեղ:

Համաձայն ուսումնասիրության արդյունքների՝
-2021 թվականի տվյալներով՝ ՀՀ միջազգային բեռնափոխադրման շուրջ 55,8%-ն իրականացվել է ավտոմոբիլային, 29%-ը՝ մայրուղային խողովակաշարային, 15%-ը՝ երկաթուղային, իսկ 0,2%-ը՝ օդային տրանսպորտով:
Ավտոմոբիլային բեռնափոխադրումներ Ավտոմոբիլային բեռնափոխադրումների մասով ուսումնասիրության մեջ ներառվել են ՀՀ ներմուծվող ապրանքախմբերից ցորենը, արեւածաղկի ձեթը եւ շաքարը, իսկ արտահանվող ապրանքախմբերից՝ կոնյակը, հանքային ջուրը եւ թարմ կամ պաղեցված ձկները:
-2021թ.-ի տվյալներով՝ ավտոմոբիլային տրանսպորտով իրականացվող միջազգային բեռնափոխադրումների շուրջ 77 տոկոսը բաժին է ընկել ներմուծմանը՝ 3 033 հազ. տոննա, իսկ 23 տոկոսը՝ արտահանմանը՝ 884 հազ. տոննա,
- ուսումնասիրության մեջ ներառված ներմուծվող ապրանքներից արեւածաղկի ձեթի եւ շաքարի իրացման գների մեջ բեռնափոխադրման ծախսերն ունեցել են 8-12% մասնաբաժին, իսկ ցորենի ինքնարժեքի կառուցվածքում՝ միջինում շուրջ 24%,
-արտահանվող ապրանքներից դիտարկվող կոնյակի, հանքային ջրի եւ թարմ կամ պաղեցված ձկների իրացման ծախսերին բաժին է ընկել միջինում շուրջ 5%-ը:
Յայաստանյան բեռնափոխադրող ընկերությունները չեն ներկայացրել գնագոյացման հստակ մեխանիզմներ՝ Նշելով, որ գները սահմանվում են՝ ելնելով տվյալ

պահին մրցակիցների կողմից առաջարկվող գներից (ոլորտում ձեւավորված միջին գին):
Երկաթուղային բեռնափոխադրումներ
-Երկաթուղային տրանսպորտով միջազգային բեռնափոխադրումների մեծ մասն իրականացվում է ներմուծման միջոցով՝ 62 տոկոս (648 հազ. տոննա), իսկ արտահանմանը բաժին է ընկնում տեղափոխվող բեռների 38 տոկոսը (401 հազ. տոննա),
-2021 թվականի տվյալներով՝ երկաթուղային տրանսպորտով ներմուծվող ապրանքներից ամենամեծ բնեղեն ծավալներն ունեցել է սավաթաթերթը՝ 385 779 տոննա (շուրջ 60%), իսկ արտահանվող ապրանքների մեջ՝ արդյունաբերական հումք եւ մետաղական խտանյութեր ապրանքախումբը՝ 148 189 տոննա (շուրջ 62%):
Ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է ներդնել միջազգային բեռնափոխադրումների ոլորտում ՀՀ գրավչությունը բարձրացնելու նպատակով ճանապարհային հարկի դրույքաչափի սահմանման առաջվել ճկուն համակարգ:

● Անցած 1 օրվա ընթացքում Յայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 15-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՓՈՐՉԱՌՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ՝ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»-ՈՒՄ

«Կոնվերս Բանկ»-ում ամփոփել են «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի ավարտական դասարանների աշակերտների համար կազմակերպված կամավորական փորձառության ծրագրի արդյունքները: Մասնագիտական կողմնորոշմանը աջակցելու նպատակով իրականացվող ծրագրի շրջանակում բանկի տարբեր ստորաբաժանումներում պրակտիկա են անցել եւ համապատասխան մասնագիտական գիտելիքներ ստացել մոտ մեկ տասնյակ դպրոցականներ:

Վկայագրերը նրանց է հանձնել «Կոնվերս Բանկ»-ի գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Անդրանիկ Գրիգորյանը:

Ողջունելով ծրագրի մասնակիցներին՝ նա նշել է. «Ռուք դիմաժիլ եք, ճկուն, ունեք ավելի մեծ հնարավորություններ մրցունակ կրթություն ստանալու, զարգանալու եւ լավ պահանջված մասնագետ դառնալու համար: Կրթությունը ոչ միայն դպրոցում ստացած գիտելիքն է, այլև այն վերլուծելու, կիրառելու ունակությունը: Կրթվեք, ձգտեք ավելի, ձեր գաղափարներով ու աշխատանքով փոխեք աշխարհը»:

Դպրոցականները ներկայացրել են իրենց տպավորությունները բանկի եւ ծրագրի արդյունքների մասին, նշել են, որ բանկի մասնագետների աջակցությամբ արդեն գործարկել են վարում են սոցիալական էջ, սկսել են աշխատել ծրագրավորման որոշ լեզուներով, հաղորդակցման տեքստեր կազմել, ինչպես նաեւ հնարավորություն են ստացել մասնակցելու հաճախորդների սպասարկմանը:

Հանդիպումն ավարտվել է բանկային համակարգի զարգացման վերաբերյալ դպրոցականների կարծիքների փոխանակմամբ:

Բանկը վերահսկվում է ԿԲ կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2023թ.-ի ապրիլի 04-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հողանդակային եղանակով:

Թիվ 39 լոտ՝ ոսկյա զարդեր՝ 22,1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 21,5 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 290.000 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտը գրավի առարկա է, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական/տրամադրվում է տեղում: Հարթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ: Լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00, ք. Երեւան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է՝ դիմումի հիման վրա:

ԲԱՅ ՆԱՍԱԿ՝ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ ԱՆՆԱ ՎԱՐՈՎՊԵՏՅԱՆԻՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Սա արդեն իմ երրորդ հաղորդումն է նույն հանցագործության մասին, որը վերաբերում է ՀՀ զիստյունների ազգային ակադեմիայի համակարգում գործող «Փորձագիտությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից դասարաններին սրամադրվող փորձագիտական կեղծ եզրակացություններին: Որդես օրինակ կարող եմ բերել իմ սրամադրության սակ հայցնված՝ ՊՈԱԿ-ի ՀՆ 15-0406ր փորձագիտական ակնհայտ կեղծ եզրակացությանը՝ ըստ թիվ ԵԿԳ/3442/02/15 բաղաձայնական գործի: ՊՈԱԿ-ի սնօրեն Ա. Հովսեփյանը ոչ միայն չուղղեց ՊՈԱԿ-ի սխալը՝ դասարանից եւ կանչելով սխալ եզրակացությունը եւ փոխարինելով ճիշտով, այլև դասժելով մեղավորներին ու ներողություն խնդրելով թույլ զված սխալի համար՝ իր դասասխառն մամուլով սղառնաց դասժել ինձ ՊՈԱԿ-ի հեղինակության հետ խաղալու համար:

Հատկանշական է, որ ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Հովսեփյանը գործում է անկաշկանդ, հակաօրինական գործունեության մեջ օգտվում է իր շուրջը ձեռավորված անպատժելիության մթնոլորտից, ինչը գալիս է հանցավոր գործերով զբաղվելու հարցերում անձամբ ՀՀ ԳԱԱ նախագահի, ոստիկանության «Մալաթիայի» բաժնի եւ Մալաթիայի դատախազության անթաքույց աջակցությունից: Այս հարցում ՊՈԱԿ-ի կողքին է նաեւ դատավորական հանրությունը: ԻՆՆ կլինի, եթե հանկարծ ՀՀ հակա-կոռուպցիոն մարմինները կամ դատախազությունը ուսումնասիրություններ սկսեն եւ շրի երես հանեն ՊՈԱԿ-ի կողմից վերջին տարիներին տրված փորձագիտական կեղծ եզրակացությունները՝ դրանք համարելով դատական որոշումների հետ. դժվար չէ պատկերացնել, թե Հայաստանի Հանրապետության անուկից քակի-քակի դատական սխալ ակտեր ու կաշառակեր դատավորներ կբացահայտվեն ու կպատժվեն ընդամենը մեկ հասարակ համակարգչային ծրագրի միջոցով: Այսպիսի մի աննախադեպ դեպք. դատարաններում օգտագործվող կոռուպցիոն սխեման փրկելու համար դատավոր էղուարդ Ամալյանը որոշել էր սահմանափակել ազատ խոսքի իմ սահմանադրական իրավունքը: Իր վարչություն գտնվող քաղաքացիական գործով հայցվորին ուղղորդել էր թերթի խմբագրություն մեկ առաջադրանքով, որ այլևս երբեք չտպագրեն Վահան Համազասպյանի հորվածները: Դատավորին անհանգստացնում է, որ սիրողական մակարդակի իմ բացահայտումների հանրայնացման դեպքում դատական համակարգը կգրկվի կաշառակերության կարեւոր գործիքակազմից: Հույս ունեմ, որ ՀՀ Նոր դատախազն իր վճռական խոսքը կասի եւ վերջ կդնի դատարանների համար «փաստեր» եւ «ապացույցներ» գեներացնող պետական կառույցի հանցավոր գործունեությանը:



բազրություն մեկ առաջադրանքով, որ այլևս երբեք չտպագրեն Վահան Համազասպյանի հորվածները: Դատավորին անհանգստացնում է, որ սիրողական մակարդակի իմ բացահայտումների հանրայնացման դեպքում դատական համակարգը կգրկվի կաշառակերության կարեւոր գործիքակազմից: Հույս ունեմ, որ ՀՀ Նոր դատախազն իր վճռական խոսքը կասի եւ վերջ կդնի դատարանների համար «փաստեր» եւ «ապացույցներ» գեներացնող պետական կառույցի հանցավոր գործունեությանը:

Հ.Գ. Կոռուպցիան (հասկապես դասախրվական համակարգում հաստատվածը) եւ ժամանակակից զիստյան ու սնկստյան զարգացումը անհամահեղելի են: Գրա համար երկու պատճառ կա, որով բացակայում են մեր հանրային ընկալումներում:

1. Կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրներում արտադրված արտադրանքին հասնել է սպառողական ցածր հասկանիչները (ցածր որակ, ցածր հուսալիության եւ բարձր ինֆուրմեյն), ինչի պատճառով կոռուպցիայից երկրների արդյունաբերական ու գյուղատնտեսական սպրանքները դառնում են անմրցունակ ու դուրս են մղվում միջազգային շուկաներից: Հայաստանի նման փոքր մեքին

շուկա ունեցող երկիրը, ունենալով նաեւ շատ վատ կոռուպցիայից, միջազգային շուկաներում կարող է իր տեղն ապահովել միայն եթե ու բարձրորակ արտադրանքով համագործակցելով սկյուրեֆի հետ: Միջազգային շուկաներում լավագույն արդյունքներ գրանցելու համար պետք է վերջ սալ կոռուպցիոն երեւոյթներին, հասկապես դասախրվական համակարգում: Կաշառակեր դատավորների պատճառով արգելափակվում է Հայաստանի սնկստյան զարգացումը:

2. Կոռուպցիայի պայմաններում խիստ դիպակային է դառնում ներդրումներ բերելը, եւ արհեստականորեն առաջ է գալիս հայկական նախագծերը Հայաստանից դուրս սանկելու սարբերակը: Այստեղից է գալիս Հերմոնի-Համազասպյան արեւային երկրասեղծ ծրագիրը Սիրիա, Բուլղարիա, Ֆրանսիա, ԱՄՆ եւ այլ երկրներ տեղափոխելու իմ եւ Վահագն Հերմոնու բանակցությունները՝ բազ զիսակցելով, սակայն, որ դրանք մշակվել են բացառապես Հայաստանի ու Արցախի սնկստյանները զարգացնելու, նաեւ միջազգային հեղինակությունը բարձրացնելու համար: Հարգանքով

Երկրների հեղինակացիայի ծրագրի հեղինակ, տեխնիկական գիտությունների դոկտոր Վահան Համազասպյան

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն՝ «ԳՅՈՒՄՐՈՒ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԱՎԱՂԵՄԻՍ» ՓԲԸ-ի նկատմամբ լուծարման վարույթ սկսելու մասին

Թիվ ՍՆԳ/3297/04/22 սնանկության գործով ՀՀ Սնանկության դատարանի (դատավոր Ա. Աթաբեկյան) 14.03.2023թ. կայացվել է որոշում «ԳՅՈՒՄՐՈՒ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԱՎԱՂԵՄԻՍ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 05541543) նկատմամբ լուծարման վարույթ սկսելու եւ գործունեությունը կասեցնելու մասին:

Սնանկության գործով կառավարիչ՝ Էղուարդ Սերոբյան: Հեռ.՝ +374-77-64-22-00:

ԵՐԿՈՒ ՓՈՐՉՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Եվրամիությունը գործարկել է անօրինական ներգաղթյալների հոսքից արտա-

քին սահմանները պաշտպանելու երկու փորձնական նախագիծ: Նախագծերի մասին հաղորդել է Եվրահանձնաժողովը:

Գործարկված նախագծերից մեկը ենթադրում է Բուլղարիայի եւ Թուրքիայի սահմանին անվտանգության ապահովում փոխադրամիջոցների, վերահսկվող ճանապարհների, տեսախցիկների եւ դիտաշտարակների օգնությամբ: Բացի այդ, նախագիծը շրջանակներում ԵՄ-ն պլանավորում է գործարկել ապաստան տրամադրելու եւ անօրինական միգրանտներին վերադարձնելու արագացված ընթացակարգեր:

Ինչպես հաղորդվել էր փետրվարին, ծրագիրը կարող է ֆինանսավորվել Եվրամիության հիմնադրամներից, Բուլղարիայի բյուջեից եւ ԵՄ-ի մյուս երկրների վճարումների ճանապարհով: «Եվրահանձնաժողովը ֆինանսական աջակցություն կտրամադրի Բուլղարիային՝ ուժեղացնելու սահմանային հսկողությունը

Թուրքիայի հետ իր արտաքին սահմանի վրա», - ասվում է ԵՄ-ի հաղորդագրության մեջ, որտեղ ստույգ թվեր չեն ներկայացվում:

Երկրորդ փորձնական նախագիծը, որի մասին նույնպես ազդարարվել էր փետրվարին, գործի էր դրվել ավելի վաղ՝ մարտի 17-ին: Այն իրականացվում է Ռումինիայում, եւ նաեւ նախատեսում է միգրանտների գրանցման Նոր գործիքակազմերի ներդրում, ապաստանի դիմումների վերաբերյալ ավելի արագ որոշումների կայացում եւ մերժում ստացած փախստականների վերադարձ:

«Իր ռազմավարական աշխարհագրական դիրքի շնորհիվ՝ Ռումինիան, սահմանակից լինելով Սերբիային, Ուկրաինային եւ Մոլդովային, հանգուցային դեր է խաղում մեր ընդհանուր արտաքին սահմանի անվտանգության ապահովման գործում»,- ասվում է Եվրահանձնաժողովի հայտարարության մեջ:

«ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»

9

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Ամերիաբանկ»-ը ճանաչվել է լավագույն ներդրումային բանկը Հայաստանում Global Finance միջազգային առաջատար ֆինանսական ամսագրի կողմից: Մրցանակն «Ամերիաբանկ»-ի՝ ներդրումային ոլորտում բացառիկ ձեռքբերումների, ինչպես նաև անհասկանալի և հաճախորդների սարքեր ֆինանսական կարիքները բավարարելու համար նախատեսված ներդրումային բանկային և խորհրդակցական լուծումներ առաջարկելու կարողության գնահատմանն է:



Լավագույն ներդրումային բանկը Հայաստանում 2023 ըստ Global Finance ամսագրի

Հեղինակավոր մրցանակաբաշխության հարթույնները ընտրվել են Global Finance ամսագրի խմբագիրների կողմից փորձագիտական գնահատականների և մի շարք չափանիշների հիման վրա, որոնց թվում են բանկերի տրամադրած տվյալները, մասնաբաժինը շուկայում, գործարքների թիվը և ծավալը, մատուցվող ծառայությունները և խորհրդատվությունը, կառուցվածքավորման հնարավորությունները, սպասարկման ցանցը, շուկայի իրավիճակին արձագանքելուն ուղղված միջոցառումները, նորարարությունը, գնային քաղաքականությունը, տեղաբաշխված արժեթղթերի շարժը երկրորդային շուկայում, ինչպես նաև համբավը շուկայում:

«Ցանկացած խոշոր գործարք նախաձեռնելիս ընկերությունները հիմք են ընդունում ներդրումային բանկերի արձագանքները, խորհրդատվությունը և ուղղորդումը: Նրանց փորձը, թերեւս, առավել մեծ նշանակություն ունի անհանգիստ ժամանակներում»,- նշել է Global Finance ամսագրի հրատարակիչ և գլխավոր խմբագիր Ջոզեֆ Դ.Ջիարապուտուն: «Այս տարի, երբ գրանցվել է աննախադեպ բարձր գնաճ և տնտեսական անորոշություններ, Global Finance-ը հպարտությամբ է նշում այս ոլորտի առաջատար հաստատությունների ձեռքբերումները՝ անցկացնելով 2023թ. «Աշխարհի լավագույն ներդրումային բանկ» մրցանակաբաշխությունը»:

«Ամերիաբանկ»-ի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Յանսյանը նշել է. «Մենք անչափ հպարտ ենք, որ ութերորդ տարին անընդմեջ ճանաչվում ենք լավագույն ներդրումային բանկը Հայաստանում Global Finance ամսագրի կողմից:

Թեև վերջին տարիներին մենք անցել ենք ավելի դիվերսիֆիկացված ունիվերսալ բանկի մոդելին,

մեկ տասնամյակից ավելի եղել ենք Հայաստանի առաջատար կորպորատիվ և ներդրումային բանկը՝ ծառայություններ մատուցելով ամենախոշոր կորպորատիվ հաճախորդներին և ֆինանսավորելով երկրի խոշորագույն ռազմավարական ծրագրերը:

Մենք խորապես երախտապարտ ենք Global Finance-ին այս մրցանակի համար, ինչպես նաև մեր ներդրումային բանկին, որի փորձառության ու նվիրվածության շնորհիվ «Ամերիաբանկ»-ը շարունակում է դիրքավորվել որպես հայաստանյան շուկայի առաջատար: Մեր ապագա ծրագրերում մենք կշարունակենք առանձնակի ուշադրություն դարձնել այն ոլորտների և նախագծերի ֆի-

նանսավորմանը, որոնք առավել խոստումնալից են

կայունության և երկարաժամկետ զարգացման տեսանկյունից»:

«Ամերիաբանկ»-ն 2022-ին միջազգային առաջատար ամսագրերի՝ The Banker-ի, Euromoney-ի և Global Finance-ի կողմից ճանաչվել է «Լավագույն բանկը» Հայաստանում, ինչի առթիվ մեկնարկել է «Եռակի լավագույն» արձավր: Այն անցկացվում է «Լավագույն հնարավորությունը ստեղծում են մարդիկ» կարգախոսի ներքո և նվիրված է վերջին տարիներին բանկի ձեռքբերումների հետեւում կանգնած բոլոր մարդկանց՝ հաճախորդներից ու գործընկերներից մինչև աշխատակիցներ:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

«Ամերիաբանկ»-ը ֆինանսական և տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: Ընթացիկ թվայնացման ճանապարհով բանկը ներդրել է մի շարք նորարար ծրագրեր ու հարթակներ և շարունակում է կատարելագործել դրանք՝ ձեռավորելով մարդու տարատեսակ կարիքների բավարարման ուղղված, դինամիկ զարգացող ֆինանսատեխնոլոգիական միջավայր:

«Ամերիա»-ն առաջինը Հայաստանում ստեղծել է էկոհամակարգեր ՓՄՁ-ների և անհատների համար՝ ապահովելով հասանելիություն բանկային և ոչ բանկային մի շարք ծառայությունների մեկ պատուհանի սկզբունքով՝ Estate.ameriabank.am, AutoMarket.ameriabank.am, Business.ameriabank.am:

Լինելով հաճախորդամետ՝ «Ամերիա»-ն ձգտում է ժամանակակից թվային աշխարհում ապահովել սպասարկման բարձր որակ՝ վստահելի և անվտանգ միջավայրում առաջարկելով կյանքի որակը բարելավելու ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԼՈՒՅՍ ՏԵՄԱՎ «ԴԵՊՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԳԻՐՔԸ



Կայացավ հայրենադարձ Մարիաննա Շահպարտյանի «Դեպի Հայաստան» գրքի շնորհանդեսը: Բնաստեղծությունների ժողովածուն արտացոլում է հեղինակի մեծ սերն ու կարոտը հայրենիքի հանդեպ: «Հայրենիքին նվիրված ժողովածու գրելու նպատակը հայաստանաբնակ և աշխարհասփյուռ հայությանը ազգային արժեքների շուրջ միավորելն է: Ես ինձ վրա վերցրել եմ բարձր առաքելություն՝ մշակույթի միջոցով միավորելու հայ ազգը իմ հնարավորության սահմաններում»,- ասաց գրքի հեղինակը: Շահպարտյանը ավելի քան 20 տարի ապրել է Ռուսաստանում: 2010 թվականին տեղափոխվել է Հայաստան: Հիշում է՝ առաջին բնաստեղծությունը գրել է դեռևս 5 տարեկանում, երբ ընտանիքով Սեւան լիճ են այցելել: Պատմում է՝ ոգեշնչվել է հենց լճի գեղեցկությունից: «Հայրենիքի հանդեպ ունեցած կարոտն ու սերը ինձ հանգիստ չի թողել: Մայրս պատմում է՝ երբ 5 տարեկան էի, Հայաստան հերթական այցելության ժամանակ Սեւանին նայելիս ասել եմ՝ շուտ թողո՞ք ու գրիչ վերցրո՞ւ ու գրիչ սասած: Մայրիկիս հանգավորված բնաստեղծություն եմ թելադրել, ու ինքն ապշած է մնացել»,- պատմեց գրքի հեղինակը: Շահպարտյանը 13-14 տարեկանում հրատարակել է իր առաջին ժողովածուն, որը եղել է ռուսերեն և ունեցել է քիչ տպագրական քանակ: Այս մեկը նրա առաջին հայատառ և շատ տպագրաքանակով գիրքն է:

«Տատիկս կիրակնօրյա դպրոցի հայերենի ուսուցիչս էր և ասում էր, որ միշտ երագում է, որ հայատառ էլ ստեղծագործեմ: Հայերենով գրելն ինձ միշտ անհնարին է թվացել, բայց այսօր հպարտությամբ գանգել եմ տեղեկացրել եմ նրան, որ իմ հայալեզու գրքի շնորհանդեսն է»,- ասաց հեղինակը:

Բնաստեղծությունները թարգմանվել են 6 լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, թարգմանել է հենց հեղինակը: Հունարեն, իտալերեն, նիդերլանդերեն թարգմանվել են թարգմանիչների աջակցությամբ: Հեղինակը խոստացավ նաև նոր գիրք, որը Հայաստան վերադառնալու մասին է լինելու: Միջոցառմանը ներկա էր նաև ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկո Մխերտբերդ:

ՀԻՇՆԱՍԱԿԻ ՀԱՄԵՐԳ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԻՇՆԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ, Հովհաննես Թումանյանի հիշատակի 100-րդ տարելիցին նվիրված, մարտի 23-ին Թբիլիսիում Գ. Լեոնիձեի անվան վրացական գրականության քանդաքանում, կրթվի «Թումանյանը և Թիֆլիսը» խորագիրը կրող ցուցահանդեսը, որը կգործի մինչև ապրիլի 13-ը:

Ինչպես ArmLur.am-ին տեղեկացրին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից, ցուցադրությունը ներկայացնում է թիֆլիսյան կյանքի թումանյանական ընկալումները՝ մարդկային հարաբերություններից մինչև գրական պոթենցիալներ: «Մարտի 24-ին Վ. Սարաջիժվիլու անվան պետական կոնսերվատորիայի դահլիճում տեղի կունենա հիշատակի համերգ. ելույթ կունենա «Գեղարդ» երգեցիկ խումբը՝ թումանյանական խոսքի ու կոմիտասյան երաժշտության տրամադրություններով: Հովհաննես Թումանյանի մահվան 100-րդ տարելիցի մի-

ջոցառումներին մասնակցելու նպատակով Վրաստան կմեկնի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի գլխավորած պատվիրակությունը»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ արքյուրի՝ միջոցառման կազմակերպիչներն են Վրաստանում Հայաստանի դեսպանությունը, Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմը, Հովհ. Թումանյանի թանգարանը (Երեւան), «Հովհ. Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնը, «Հայարտուն» մշակութային կենտրոնը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտը (Երեւան):

Թումանյանը սկսել է ստեղծագործել 80-ականների կեսից, այդ ժամանակ էլ սկսում է համագործակցել հայկական տարբեր թերթերի ու ամսագրերի հետ: Լայն ճանաչում է ձեռք բերում «Բնաստեղծություններ» հավաքածուի (1-2 հատոր, 1890-92) լույս տեսնելուց հետո: Իր ստեղծագործություններից շատերում նա նկարագրում է նահապետական օրենքներով ապրող գյուղացիների կյանքը, որը լի

է ներքին ու հաճախ ողբերգական հակասություններով: Այդ թեմային են նվիրված Թումանյանի այնպիսի պոեմները, ինչպիսին են «Մարոն» (1887, հրատարակվել է 1892թ.), «Լոռեցի Սաքոն» (1889, հրատարակվել է 1890թ.), «Անուշ» ողբերգությունը (1890, հրատարակվել է 1892թ.):

Թումանյանի պոեմներից, բալլադներից ու հեքիաթներից շատերի հիմքում ընկած է ժողովրդական բանահյուսությունը: XX դարի սկզբին Թումանյանը հայտնի է դառնում նաև որպես հասարակական գործիչ: 1905-07 թվականներին մասնակցում է Բաքվի հայ-թաթարական ընդհարումների հաշտեցմանը: Ցարական կառավարության կողմից երկու անգամ ձեռքակալվում է (1908 և 1911) ու բանտ նետվում: 1912-1921 թթ. Հայ գրողների կովկասյան միության նախագահն էր: Արդեն Հայքի խորհրդայնացումից հետո դառնում է Հայաստանի օգնության կոմիտեի նախագահ (1921-22): Հովհաննես Թումանյանը վախճանվել է 1923 թ. մարտի 23-ին՝ 54 տարեկան հասակում, Մոսկվայում:

● Մարտի 22-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Տղաները չափն անցնում են» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-6000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



Էջը՝ ՈՂՋԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Ես Հայ առաքելական եկեղեցու հետևորդ եմ և հաճախում եմ յոզայի դարադրումներին: Ուզում եմ իմանալ՝ որքանով է մեր եկեղեցին խախտում յոզան, արդյո՞ք յոզան չի հակառակում ֆրիսոնեոլոգյանը, վսանգներ չի դարձնում, որե՞ն այլ կրոնի կամ աղանդի հետ կապ չունի:
Մարգարիտա Հովհաննիսյան (57 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Նշենք, որ յոզան դեմ է քրիստոնեական վարդապետությանը: Հայ առաքելական եկեղեցու հետևորդները նրանք են, որոնք, առաքելական ավանդության համապատասխան, մկրտված են առաքելական եկեղեցում և ամեն կիրակի մասնակցում են Սուրբ Պատարագի՝ հաղորդվելով Տեր Հիսուս Քրիստոսի հետ:

Հետևորդ լինել նշանակում է հետեւել՝ հետեւից գնալ, վստահել, նշված ուղուց չխտորվել: Չի կարելի հետեւել մեկին և համարվել մյուսի հետևորդ: Բուն քրիստոնեությունը Տեր Հիսուս Քրիստոսի հետ Սուրբ Հաղորդությունն է, ում առաջնորդությամբ մենք կարող ենք հասնել երանվետ հանգստյան, որը մեղքերի քակության միջոցով է լինում:


Յոզայի բերած հանգիստն ու անդրդվելիությունը պատրանք է, որովհետև խաղաղության կերպարանք տալով յոզայով զբաղվողին՝ սվաղում, ծածկում է նրա մեջ մեղքերից վատթարագույնը՝ հպարտությունը: Յոզայով զբաղվելով դուք չեք նկատի, թե ինչպես եք ընկնում հպարտության ախտի մեջ: Հենց դա է պատրանքը: Տեր Հիսուս Քրիստոսն ասում է. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը» (Հովհ. 14:6), «Չեք կարող երկու տիրոջ ծառայել» (Մատթ. 6:24):

Արարատյան հայրապետական թեմ

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Պաշտոնապես ասվում է, որ յոզայի հայրենիքը Հնդկաստանն է, սակայն շատերը պնդում են՝ այն ավելի հին արմատներ ունի: Արվեստ, գիտություն կամ կրոնական ծիսակարգ. յոզայի մասին բազմաթիվ մեկնաբանություններ կան: Այն հասկանում են տարբեր ձևով, ընդունում կամ մերժում տարբեր պատճառաբանություններով:

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Քոլեջի ո՞ր օրջանավարտ կարող է ուսումը ցարունակել բուհի 2-րդ կուրսում:
Քնարիկ Բարսեղյան (28 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու գործընթացը կազմակերպվում է ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 8-ի N 752-Ն որոշմամբ:

Հավակնորդների կրթությունը բուհում կազմակերպվում է հետևյալ կերպ՝ ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը, իսկ հետագա ժամանակաշրջանում ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Առարկայական տարբերություն է համարվում նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով հաստատված, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամանակների կամ մոդուլային ուսումնական ծրագրի բովանդակության համեմատությամբ առնվազն 30 և ավելի տոկոս կազմող տարբերությունը:

ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում՝ Ազգային ժողովում



Ազգային ժողովում թեժ քննարկում է, եւ անվտանգության աշխատակիցները միջանցքում կազմ-պատրաստ սպասում են՝ եթե դահլիճում բախում լինի, արագ մտնեն դահլիճ և հանդարտեցնեն պատգամավորներին:
Նշենք, որ Ազգային ժողովում երեկ թեժ իրավիճակ էր. վիճաբանում էին ընդդիմադիր և իշխանական պատգամավորները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը և ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
 Ազգանուն՝ _____
 Առաքման հասցե՝ _____
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը.
«Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 21.03.2023
Պատկերը/Պատկերակազմը հարցի, 4 հավելումներով 2021

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: